

Սուրիոյ պետական ռատիոկայանը յայտնեց, որ ամերիկեան զորակցութիւնը Իսրայէլի, պատճառ կը դառնայ, որ հրեական պետութիւնը անտեսէ ՄԱԿի վերջին բանաձեւը, որ կը պահանջէ վերջնական Եսաէր Արաքսի նստավայրին պաշարումը: Ռատիոկայանը անցնուց, որ Իսրայէլ պիտի չըմբոստանար ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին դէմ, եթէ ապահով չզգար, որ Ռաշինկընը զօրավիգ կը կանգնի ու կը պաշտպանէ վինք:

(ՌՈՅԹԸՂ)

### ՖՐԱՆՍԱԿԵՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԸ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ նախագահեց ժողովի մը, որուն ներկայ գտնուեցան արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ, տեղեկատուութեան նախարար Ղալի Արիտի, մշակութիւն նախարար Ղասսան Սալամէ, Ֆրանսախօս Երկիրներու Կազմակերպութեան մօտ նախագահի մնայուն ներկայացուցիչ Շարլ Ռըպը եւ նախագահական պալատի պատասխանատուներէն՝ Էլի Ասաֆ:

Ժողովին քննարկուեցան Պէյրութի մէջ Հոկտեմբեր 18էն 20 գումարուելիք Ֆրանսախօս Երկիրներու Կազմակերպութեան վեհաժողովին նախապատրաստութիւնները, ժողովին օրակարգը, անոր ելուցակի յայտարարութիւնը, եւ անոր մասին կազմակերպութեան անդամ երկիրներուն միջեւ խորհրդակցութիւնները: Ժողովը որդեգրեց վեհաժողովին կազմակերպական եւ քաղաքական յաջողութեան

վիճակով եւ ճիգ ընէ, որպէսզի ոճիւրդն ի վեր փակ մնացող սնտուկը վերակառուցուի: Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց սեփական վարժարաններու ուսուցիչներու սենտիքայի խորհուրդին պատուիրականութիւնը, գլխաւորութեամբ՝ սենտիքայի նախագահ Ժորժ Սաստէի, որ շնորհակալութիւն յայտնեց սեփական վարժարաններու ուսուցիչներուն հատուցումներու սնտուկին (ԵՈՒՆԵՍԿՕ) մէջ երեք ամիս առաջ պատահած ոճիւրդին նախագահ Լահուտի ընծայած յատուկ ուշադրութեամբ: Սաստէ հաստատեց, որ նախագահ Լահուտ անձամբ այս հարցին վարձացումներուն հետեւելով եւ անոր մասին կազմակերպութեան անդամ երկիրներուն միջեւ խորհրդակցութիւնները: Սաստէ հաստատեց, որ նախագահ Լահուտ շարունակէ հետաքրքրելի ուսուցիչներուն

### ՀԱՄԱՍ Կ'ԵՐԴՆՈՒ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ԶՁԳԵԼ ԻՐ ԵՐԿՈՒ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Իսրայէլ յայտարարեց, որ պաղեստինցի ծայրայեղական ղեկավար մը, որ ամէնէն աւելի հետապնդուած անձերու անուանացանկին վրայ կը գտնուի, փրկուած է իսրայէլեան յարձակումէ մը, որ քաղաքային վերաւորներ պատճառելով դատապարտուած էր միջազգային ընտանիքին կողմէ:



Համասի անդամ Ապտէլ Ռահիմ Համտահի յուղարկաւորութիւնը երէկ վերածուեցաւ Իսրայէլի դէմ բողոքի բուռն ցոյցի մը

«Արդարութիւնը իր ընթացքը պիտի առնէ, մանաւանդ որ դատական իշխանութիւնը արդէն նախնական ամբաստանագիր ուղղած է այս գոմը. պէտք է վստահիլ արդարադատութեան, որովհետեւ ան է իրաւատէրերուն վերջին ապահովը եւ օրէնքը արդար ու հաւասար ձեւով գործադրողը», ըսաւ ան:

Երկու զոհերուն յուղարկաւորութեան, որ վերածուեցաւ Իսրայէլի բողոքի մէջ թիրախ դարձուցած էին Տայֆի ինքնաշարժը: Գործողութեան ընթացքին Գործողութեան ընթացքին երկու զինեալներ, ինչպէս նաեւ վերաւորուած էին աւելի քան 27 քաղաքայիններ:

Սուրիոյ ընդհանուր քաղաքացիական պատերազմի ընթացքին Իսրայէլի դէմ բողոքի բուռն ցոյցի մը

Սուրիոյ ընդհանուր քաղաքացիական պատերազմի ընթացքին Իսրայէլի դէմ բողոքի բուռն ցոյցի մը

### ՊՐՆ ԼԱՏԵՆ ԵՒ ՍՈԼԼԱ ՕՍԱՐ ՈՂՋ ԵՆ ՈՒ ԱՖՂԱՆԻՍՏԱՆ ԿԸ ԳՏՆՈՒՄ

Ռուսմա Պրն Լատէն եւ Թալեպան շարժումին ղեկավար մոլլա Օմար ողջ են եւ Աֆղանիստան կը գտնուին, ըսած է Թալեպաններու օրով Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ Աֆղանիստանի դեսպանատան նախկին առաջին քարտուղար Նասիր Ահմէտ Ռուհի երէկ թղթակիցներու, Փաքիստանի գաղտնի մէկ վայրին մէջ:

### ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ ՄԻՆՍՔԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՆԱԽԱԳԱՀ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԸ

Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկաղի Ղուկասեան երէկ Ստեփանակերտի մէջ ընդունեց ԵՄԿՀ Մինսքի խմբակին նախագահներ Հիլլ Փեռնէն (Ֆրանսա), Ռուտոլֆ Փերենան (Միացեալ Նահանգներ), Նիքոլայ Կրիպոզը (Ռուսիա) եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարի առաջին տեղակալ Վիաչեսլաւ Տրուպինիով:

Սուրիոյ ընդհանուր քաղաքացիական պատերազմի ընթացքին Իսրայէլի դէմ բողոքի բուռն ցոյցի մը

Սուրիոյ ընդհանուր քաղաքացիական պատերազմի ընթացքին Իսրայէլի դէմ բողոքի բուռն ցոյցի մը

### ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ

### ՀԱՅԱՍՏԱՆ ԼՈՒՐՋ ՅԱՌԱՋԸՆԹԱՑ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է

Սքրազպուրկի մէջ 26 Սեպտեմբերին Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստին ընթացքին քննարկուած են Հայաստանի եւ Ազրայէլի ստանճնած պարտաւորութիւններու կատարման մասին Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի քննիչ խմբակներուն զեկուցումները:

**ԱՅՍՕՐ**  
Հովանաւորութեամբ՝  
**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՇՈՒՏԻ**  
Ներկայութեամբ՝  
**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ**  
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ  
**Ն. Յ. Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԳՐՈՆՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ**  
Ձեզ կը հրաւիրու  
**ԱՂԲԱԼԵԱՆ - Շ.Մ.Ը.Մ. ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**  
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 28 Սեպտեմբեր 2002ին, երեկոյեան ժամը 6:00ին, Աղբալեան - Շ.Մ.Ը.Մ. Մարզամշակութային Համալիրին մէջ, Անթիլիաս, Մզգիտ:

**ԱՅՍՕՐ**  
Հովանաւորութեամբ՝  
**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՇՈՒՏԻ**  
Ներկայութեամբ՝  
**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ**  
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ  
**Ն. Յ. Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԳՐՈՆՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ**  
Ձեզ կը հրաւիրու  
**ԱՂԲԱԼԵԱՆ - Շ.Մ.Ը.Մ. ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**  
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 28 Սեպտեմբեր 2002ին, երեկոյեան ժամը 6:00ին, Աղբալեան - Շ.Մ.Ը.Մ. Մարզամշակութային Համալիրին մէջ, Անթիլիաս, Մզգիտ:

**ԱՅՍՕՐ**  
Հովանաւորութեամբ՝  
**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՇՈՒՏԻ**  
Ներկայութեամբ՝  
**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ**  
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ  
**Ն. Յ. Գ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԳՐՈՆՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ**  
Ձեզ կը հրաւիրու  
**ԱՂԲԱԼԵԱՆ - Շ.Մ.Ը.Մ. ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**  
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 28 Սեպտեմբեր 2002ին, երեկոյեան ժամը 6:00ին, Աղբալեան - Շ.Մ.Ը.Մ. Մարզամշակութային Համալիրին մէջ, Անթիլիաս, Մզգիտ:







# Գրական Ե

## ՊԱՐՉ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԱՇԽԱՐՀ ՄԸ

«Գեորգ Մելիտինցի» գրական մրցանակի որոշումով շուրջ տարի մը առաջ հրատարակութեան արժանացած «Մաքառում» անուն հատորը չորրորդ գիրքն է 1984ին մահացած Սուրբ Սանիգեանի: «Ես յանցանք գործեցի», «Տասներկու նորավէպեր եւ պատմութեան» (1963) եւ «Հեռու թաց ու լուսաւոր մայիսի վրայ» (1974) խորագիրներուն տակ տարբեր աշխարհներ՝ սիպերիական քաղաքային ստեղծագործութիւններն ու օտար մայրենի լուսաւոր ցուրտը պատկերելու ետք, ամերիկահայ արձակագիրին յետ մահու հրատարակութեան է 308 էջեր հաշուող այս գիրքը կ'ամփոփէ տարբեր ծաւալի 5 ստեղծումներ՝ «Մաքառում», «Վարձկանը», «Հրապուրդ», «Ընկերները» եւ «Կոշմար», որոնք համամարդկային նոյն ջերմութեամբ կը բացուին ցեղային եւ նկարագրային ուրոյն առանձնապատկերներով բնորոշուող այլաբանութիւններով վրայ եւ կը կարկանդակ գիրքը ամբողջացնող ինքնատիպ տիպարներ:

Հայ, թուրք, գերման, ամերիկացի, ռուս եւ այլ ազգութիւններու ներկայացուցչական դէմքերով այլազան ոլորտներ խնդրակող արձակագիրին տոյն հատորին առաջին ստեղծումը «Մաքառում»ը եթէ լուսարձակ կը կեդրոնացնէ Մեծ եղեռնի արհաւիրքէն ետքուրաճ հայութեան մեղացորդացի սարդաբանական սիւրբգործութեան վրայ՝ լայն բունելով հրապուրիչ կերպարը Աւետիս Ահարոնեանի Վագրիկի հարազատ հոգեղբայր Վիրապին, գիրքը փակող եւ անոր ամենէն ծաւալուն գրութիւնը (128 էջ) ո՛չ միայն կը պարզէ համապատկերը «մի կեանքի պատմութեան», այլեւ գրչի արագ հարուած-

կեանքի գալիք հանգրուաններուն վրայ: Աւետի Գ. Եռանգի հոգիին նստած վիշտը, ուղղակի եւ անուղղակի խոդովակներով, աւելի ուշ կ'անցնի հայ - գերման հերոսին կնոջ՝ Էլզիի, որուն պատերազմական իրավիճակէն բխած տառապանքները կը ստանան յաւելեալ ծանրութիւն եւ անտանելի շեշտաւորում: Պարտադրաբար ծերունի դասախօսը կը խրի սեւ առեւտուրի առաջատիղմին մէջ, ոստիկաններէ հետապնդուելու ետք, կ'ապրի դատաւարութեան հետ ահագնացող նուաստացման վիճակը, մահապատիժի անհրաժեշտ վիճակը յաջողած ենք բերքի փոթորիկները եւ ելեկտրական աթոռի մահասարսուռ սպառնալիքին տակ փուլ կու գայ վերջնականապէս, ահաւոր սուսուսանքներու ոլորտայտոյններու մէջ:

Այսպէս, հակադրական իրակացութիւններն ու ժամանակները՝ ցնորքն ու շօշափելի իրակացութիւնը, մանկութիւնն ու ծերութիւնը միահիւսելով՝ Սուրբ Սանիգեան իր տիպարները կ'առաջնորդէ դէպի իրերայաջորդ ալեկոծ հանգրուաններ, որոնք միշտ ալ վերջ կը գտնեն խաղաղութեան օդային թեթեւութեամբ, ինչպէս «Մաքառում» վիպակի պարագային: Կը տրի անհուն խաղաղութիւն, մահը կը դառնայ կեանքի լուսաւոր շարունակութիւն, որուն թելերով այս աշխարհէն բարձրացողները կը լուծուին օդին մէջ եւ կ'անհետան: յար եւ նման Եռանգի Գործերն են:

Կեանքի սովորական մանրամասնութիւններէն յաւերժական հոգեվիճակներ ստեղծելու այս մտտեցումը ի յայտ կու գայ գրականութեան լուսանցքին ապրած Սուրբ Սանիգեանի նաեւ միւս գործերուն մէջ: Պարզ եւ անսթեբեթ ոճով մը ան կը ներկայացնէ բարախուն ու թափանցիկ տեսարաններ, որոնք սիրոյ քաղցր ու սրտագրաւ հանդիպումները, յուսաբեկումներն ու ոգեշնչող պահերը կը շերտացնեն բազմերանգ եւ կենսունակ երկխօսութիւններով: Եւ առաջին ակնարկով սովորական գոյներով ներկայացող հանդիպումներն ու խօսակցութիւնները, շնորհիւ Սուրբ Սանիգեանի անհրաժեշտ տաղանդին, կը ստանան առնցքային բովանդակութիւն ու բարախուն կշռոյթ, իւրայատուկ նկարագիր ու գրաւչութիւն, որոնք գրութիւնը կ'օտոնեն յաւելեալ արժանիքներով եւ բառերուն մէջ բունուած կեանքը կը հոսի ակնդիրը միշտ լարուած պահող հետաքրքրաշարժ ժապաւեցի մը գրաւչութեամբ եւ խօսքին թելադրականութեամբ...

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

## Մ Ա Ք Ա Ռ Ռ Մ

Երեք օր շարունակ, Սարգսիան Մարկոսը, երբ գլուխը վեր էր վերցնում գետնից, միշտ էլ Մարկի միջոցով նոյն բարի լուրն էր հաղորդում՝ «Թշնամին թէեւ դանդաղ, բայց նահանջում ա»: Նա իր այդ գուշակութիւնները հիմնում էր պատերազմական գործողութիւնների ձայների աստիճանական հեռացման վրայ: Մի օր էլ Մարկոս պապն ինչքան ականջ դրեց՝ է՛լ ոչինչ չլսեց:

- Կուրս վերջացել է,- իր թոռնիկի միջոցով ազդարարեց նա:

Մենք շուտ մնացինք: Եթէ վերջացել է յօգուտ մեզ, ապա ինչու մենք տեղեկութիւն չունենք: Եթէ վերջացել է յօգուտ թուրքերին, ապա ինչու թուրքերը չեն գալիս:

Նոյն օրը, երկուշաբթի, երբ գիւղի հրապարակում էին հաւանուել մեր գիւղի գառամեալ այր թէ կինները եւ մենք՝ երեխաներս, յանկարծ եկաւ Տէր Ղազարը: Նա նորից զինուորական հագուստով էր, նորից ուսից կախել էր հրացանը, կոզնած էր ու փոշոտուած, սակայն դէմքին ժպիտ կար, մեծ ու երջանիկ ժպիտ: Հազիւ հասած ամբոխի եզրին, նա ազդարարեց.

- Ես ձեզ աւետիք եմ բերել, մեծ եւ անզուգական աւետիք: Թշնամին պարտուեց եւ նահանջեց: Թշնամին մեզից զինադադար խնդրեց: Մեր Ազգային խորհուրդը Հայաստանն անկախ յայտարարեց: Մենք այժմ պետութիւն ենք, մենք մեր կառավարութիւնն ունենք, մենք այժմ մեր գլխի տէրն ենք: Ժիշդ է, մենք աղքատ ենք, մեր երկիրը լեցուն է գաղթականներով, որբերով եւ զրկանքով, բայց այժմ մենք հայ ենք, մենք ազատ ենք...

Ամբոխն իրար խառնուեց: Ծերունիները սկսեցին զրկել եւ համբուրել միմեանց: Պառաւ կանայք նոյնպէս: Մահուան վախը չկար այլեւս թուրքի ետեւադահի: Իսկ ազգային պետութիւն, ազգային կառավարութիւն հանգամանքները երազային դէպքերի պէս էին ներկայանում: Մէկ անգամից շատ բան է տեղի ունեցել: Մենք ո՛չ միայն ազատուել էինք ստոյգ մահից, այլեւ դարձել էինք ինքնիշխան:

Ձարմանալի է մարդը, նոյնիսկ մանուկը, որ ես էի: Մեր յաղթութիւնը համաշխարհային բնոյթի էր: Մենք յաղթել էինք մի գերհզօր պետութեան բանակին, որ եկել էր միայն ու միայն մեզ ոչնչացնելու, մեր մայրերին եւ ժողովրդին գերի տանելու: Նա եկել էր վերջ դնելու մեր ցեղին, մեր ցեղային գոյութեանը: Բայց ահա շարունակով զինադադար էր առաջարկել մեզ: Մեր յաղթութեան պարագան աւելի մեծ նշանակութիւն է ստանում մանաւանդ այն հանգամանքով, որ մենք յաղթեցինք մեն-մենակ, որ դրսից մեզ մէկը ձեռք չպարզեց, որ մէկը մի գնդակ չարձակեց յօգուտ մեզ: Բարեբախտաբար Արեւմուտքի մեր դաշնակիցները, այսպէս կոչուող «քաղաքակիրթ» երկրները մեզ թողել էին մեր բախտի կամքին: Նրանք մատ մատի չխփեցին, երբ բնաջնջուեց Արեւմտեան Հայաստանի հայ բնակչութիւնը, այժմ էլ նրանք չտեսնեցին էին գնում, երբ ոտից ցանկանում էր բնաջնջել հայութեան երկրորդ կէսը: Եթէ կապ լինէ մեր եւ մեր դաշնակիցների միջեւ, եւ եթէ մենք խորհուրդ հարցնելու լինէինք նրանց, նրանք մեզ պիտի ասէին՝ «Թրքացէ՛ք, մեր փրկութիւնը միայն թրքացումն է մէկ է կայանում»: Նրանք այդպէս պիտի ասէին, որովհետեւ վաշխառուներ են, որովհետեւ վաշխառու են պատիւ չունի:

Այսպիսով մենք մեր արիւնքով ձեռք բերեցինք մեր գոյութեան իրաւունքը եւ արիւն թեցինք մեր «դաշնակիցների» երեսներին, որոնք մէկ անգամ եւս մեզ պիտի խաբէին:

\* \* \*

Ընդհանուր ուրախութեան մէջ իմ միտքը աշխատում էր Վիրապի մասին: Տէր հայրը դեռ խօսում էր եւ ես էջի համարձակուում նրան խանգարել: Բայց վերջում չդիմացայ եւ ձգեցի նրա հրացանի կոթից: Նա ինձ նայեց, ուզեց ժպտալ, բայց միտքը ցրել լինելու պատճառով ձեռքը տարաւ դէմքին եւ անցաւ դէմքի վրայով:

- Տէր հայր, ո՛րը է Վիրապը... Նա ինձ չպատասխանեց, այլ՝ ամբոխին.

- Մեր Վիրապը սպաննուեց... Ամբոխի մէջ վախստուն սկսուեց:

- Այո՛, - կրկնեց քահանայը,- Վիրապը սպաննուեց, սպաննուեց, քաջի եւ հերոսի պէս: Նա մեր գիւղի գաւակն էր, եւ ես առաջարկ պիտի բերեմ նրա կիսանդրին դնելու մեր հէնց այս հրապարակի վրայ, եւ թող մեր աղջիկները ծաղկեփնջեր գետեղեն նրա պատանդանին:

Յետոյ քահանայն պատմեց, թէ ինչպէս Վիրապը սպաննուեց: Նա մի օր շուտ է հասել կուրուի դաշտը, քան տէր հայրը, որովհետեւ ձիաւոր էր: Ծակատում Վիրապը գտնում է իր տարիքին չորս պատանիներ, ամէնքն էլ ձիաւոր: Այդ հինգ հոգին ստեղծում են այսպէս կոչուող «Մահուան զոհատ» եւ իրենց վրայ պարտականութիւն են վերցնում հարուածելու թշնամու այն դիրքը, ուր նրանք աշխուժութիւն են ցուցաբերում եւ ցանկանում են դուրս գալ իրենց դիրքերից: Վիրապն իր ձիաւոր խմբով մորիկի պէս հասնում էր թրքական այդ դիրքին եւ առանց նկատի առնելու սուրացող գնդակների տարափո՛ր իրենց սրով հարուածում էին թրքական գանկերին:

Պատանիների այդ խումբը իրենց մահը իրենց աչքի առջեւ էին առել: Եթէ պէտք է մեռնել, ապա մեռնել ազգի համար: Այդ էր նրանց նշանաբանը: Նրանք շարժում էին թուրքերին, խօսք չկար բայց միշտ էլ

գետը գերան չի բերում:

Պատանիների այդ ձիաւոր խումբը գնալով նուագում էր: Սակայն Վիրապը դեռ մնում էր, եւ այդ՝ շնորհիւ նրա խելացի ձիուն: Դուրք երեւի գիտէք, որ Վիրապն այդ ձիւն ձեռք էր բերել, երբ այն քուռակ էր դեռ: Վիրապն այդ անասունին մեծացնում էր մեծ խնամքով ու գուրգուրանքով: Նրանք իրար կապուել էինք երկու եղբայրների պէս: Եւ ահա եկաւ չարաբաստիկ ժամը: Վերջին անգամ, երբ Վիրապը արշաւ էր կատարում թրքական մի դիրքի վրայ, նա սպաննուեց: Մենք մեր դիրքերից տեսանք ամէն ինչ: Վիրապն ընկաւ կողքի, ձախ ոտքը թողնելով սապանդակում: Զինն հասկացաւ ամէն ինչ, շրջուեց տիրոջը՝ մեր դիրքերը հասցնելու, բայց շուտով Վիրապի այդ ոտքն էլ դուրս եկաւ սապանդակից եւ Վիրապը փոռուեց հողին: Չնայած թշնամու գնդակների տարափին, ձիւն մնաց տիրոջ մօտ եւ սկսեց վրնջալ շատ տխուր: Նա ուզում էր, որ Վիրապը ելնի տեղից: Բայց ի գուր էր ձիու աղբսանքը, Վիրապը չկար այլեւս...: Չնայած թշնամու տեղացող գնդակներին, երկու հոգի պատգարակով գնացին Վիրապի մարմինը բերեցին:

Վիրապին թողեցին զինուորական պատիւներով: Քսանմէկ զինուորներ երեք անգամ համազարկ արձակեցին: Թաղմանը ներկայ էր նաեւ նրա ձիւն, որը վրնջում էր եւ առջեւ ոտքերով հողը դոփում: Թաղումից յետոյ ձիու սանձը հանեցին գլխից եւ թողեցին, որ գնայ: Նա մի քիչ մնաց եւ ապա գնաց: Երկրորդ օրը մենք նորից տեսանք Վիրապի գերեզմանի մօտ: Յետոյ նա գնաց...

Տէր հօր ձայնը խոսեց եւ նա լռեց: Ես ինքս էլ չգիտէի թէ ո՞վ եմ այդ պահին: Տէր հօր ասածներն ինձ երազի պէս էին թւում: Թուում էր, որ ես մի մեծ եւ անվերջանալի երազ էի տեսնում: Ես ուզում էի արթնանալ այդ չար երազից, բայց արթնացում չկար: Ես ուզում էի լաց լինել, բայց չէի կարողանում լաց լինել: Ես չէի կարողանում հաստատալ, որ Վիրապը չկայ այլեւս: Որ նա սպաննուած է:

Յանկարծ բազմութիւնը լռեց: Լսելով տէր հօր վերադարձի մասին, իր տնից դուրս էլ եկել Նիկոլ ապէրը եւ իր վնասուած ոտքը քարշ տալով դէպի մեզ էր գալիս: Ես նայեցի քահանային, որն այլայլուեց: Նա չգիտէր, թէ դէմքն ուր պահէր:

- Տէր հօր, ո՛րը է Վիրապը,- հասնելով տէր հօրը, հարցրեց Նիկոլ ապէրը:

Ես քահանային էի նայում, որ նա գլուխը բարձրացրեց, երկու ձեռքը դրեց Նիկոլ ապօր ուսերին: Յետոյ նա գրկեց ծերունուն եւ համբուրեց նրա քունքը: Մենք բոլորս պարզ կերպով լսեցինք, երբ նա բառերը հատիկ - հատիկ արտասանելով ասաց.

- Նիկոլ ապէր, Վիրապը սպաննուեց...: Կու՛ժը ջրի ճանապարհին է կոտորում: Վիրապը չէր կարող ծերութիւնից մեռնել, նա պէտք է սպաննուէր: Նա մեռաւ, որպէսզի իր արիւնակիցները ապրեն...

Սկզբում Նիկոլ ապէրը տէր հօրը լսում էր շատ հանգիստ: Բայց տէր հայրը դեռ խօսում էր ու Նիկոլ ապէրը տատանուեց: Նա պէտք է ընկնէր, բայց մօտիկ կանգնածները բռնեցին նրան եւ տարան նստեցրին պատի տակ գտնուած քարի վրայ: Ես գնացի կանգնեցի նրա առջեւ: Սկզբում նա իր ցուպի ծայրով գծեր էր քաշում գետնին: Յետոյ նա արտասուեց: Արցունքները նրա աչքերից վար էին գորուում եւ գնում թրջում նրա սպիտակած մօրուքը:

Այդ ժամանակ ես հասկացայ, որ Վիրապն իրապէս սպաննուել է: Գնացի նստեցի Նիկոլ ապօր կողքին, ձեռքս կպցրի նրա ցաւացած ծնկանը եւ սկսեցի հեկեկալ:

Յանկարծ ժողովուրդն աղաղակեց.

- Վիրապի ձիւն ե՛տ եկաւ, Վիրապի ձիւն ե՛տ եկաւ... Ես վեր թռայ տեղիցս եւ նայեցի: Իրապէս Վիրապի ձիւն ետ էր գալիս: Նա գալիս էր լուռ ու զրկուոր եւ չփոթ դանդաղ քայլերով: Պարզ էր, որ սոված էր, ծարաւ եւ յոգնած: Նա թամբ չունէր եւ ոչ էլ սանձ: Եկաւ մտաւ ժողովրդի մէջ: Տղամարդիկ, կանայք եւ երեխաները նրան ձեռք էին տալիս գուրգուրանքով, բայց նա անտարբեր էր: Ըստ երեւոյթի, գնում էր կամուրջն անցնելու, որից ոչ-հեռու՝ Վիրապենց կուռն էր: Սակայն տեսաւ Նիկոլ ապօրը, տարտամօրէն մտտեցաւ նրան, կանգնեց, նայեց, նայեց եւ մէկ էլ խրխնջաց տխուր եւ գլուխը դրեց Նիկոլ ապօր գրկում:

Նիկոլ ապէրը սթափուեց իր վշտից, շոյեց ձիու գլուխը եւ համբուրելով նրա դունչը հեծկտանքով ասաց.

- Տօ, լաճ տնակեր...

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

(Հատուած)

Ի՞նչ Կ'ԸՍԵՆ ԿԱՍ Կ'ԸՍԵՆ  
ՓՈԼԿԿԼՕԹ  
ԲՈՒՄԻ ԾՐՁԱՆԱԲԱՐՏԵՐԸ

«... Փոլիկոթ Քոլիճէն մասնակցեցայ BT3 քննութեան, Լիբանանի մէջ բարձրագոյն նիշը ապահովող տառչին հիւզիւն մէջ էի: Ապա լազոդեցայ նաեւ ՄՍ վկայականի քննութեան: Այժմ կ'աշխատիմ որպէս գլխաւոր հաշուապահ ոսկերչական մեծ ընկերութեան մը մէջ, Պուրճ Համուտ...»:

ԹԱԼԻՆ ՃԱՐԻՔԵԱՆ

## ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

Ծնած է 1 Մայիս 1912ին, Ղամարուի (Արտաշատ) շրջանի գիւղերէն Ջիրզանթողի մէջ: Տեղւոյն միջնակարգ վարժարանը աւարտելէ ետք, Երեւանի մէջ կը շարունակէ ուսումը եւ կը հետեւի գիւղատնտեսութեան:



Երեսնական թուականներուն կ'աջտորուի Միպերիա ու սահմանաւած «պատիժը» կրելէ ետք, կ'անցնի Հիւսիսային կողմէն ու Խոստովի համալսարանին մէջ կը հետեւի պատմութեան, փիլիսոփայութեան եւ գրականութեան ճիւղերու դասընթացներուն: Հոն կը վարէ նաեւ ուսուցչական եւ ուստիկանական պաշտօններ:

Համաշխարհային երկրորդ պատերազմից օտարակոչուելով՝ կը մասնակցի ճակատամարտերու, գերման ուժերուն կողմէ գերի կ'իյնայ եւ շրջան մը կ'ապրի Շիւթի կարտի մէջ արգելափակ-

կազմէ «Ամերիկայի ձայն» ռատիոկայանի հայկական բաժնի խմբագրական կազմին: Աշխատակցած է Սփիւռքի շարք մը թերթերուն ու լայն ընծայած երեք գործերը՝ «Ես յանցանք գործեցի», «Տասներկու նորավէպեր եւ պատմութեան» (1963), «Հեռու թաց ու լուսաւոր մայիսի վրայ» (1974):

Սուրէն Սանինեան հիւանդութեան ծանր օրերուն իր գործերուն մէջ շարքը պահ դրած էր իր բարեկամներէն Հենրիկ Ե Անասիկ Պոտաբեաններուն մօտ, որոնք «Բապի»ի տրամադրութեան տակ դրին անոր ժառանգութեանէն ինքն անուն երկիր: Այդ ինքն կտորներէն հինգը ամփոփուեցան «Գ. Մելիտինցի» գրական մրցանակի հրատարակած «Մաքառում» հատորին մէջ:

Իր մահը (1984) մաս կը

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ


ՀԱՄԱՑԱՆՑ



ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԵՐ

### «ԱՉԱՏ ՕՐ»-Ի ՀԱՄԱՑԱՆՑԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԿԱՅՔԵՐ



Հ. Յ. Դաշնակցության Յունաստանի շրջանի պաշտոնաթերթ «Ազատ Օր»-ը քանի մը օր առաջ հանրության տրամադրության տակ դրաւ Համացանցի իր կայքը:

www.azator.gr հասցեով այս կայքը առայժմ ամենօրեայ մէկ էջի սահմաններուն մէջ հանրութեան պիտի ներկայացնէ օրուան գլխաւոր ջանքի մը լուրերը: Թերթը սակայն յանձնարու է պապային «այս էջը աւելի բովանդակալից եւ ճոխ դարձնելու» եւ զայն գաղութային յայտարարութիւններով, հաղորդագրութիւններով ու զանազան այլ նիւթերով հարստացնելու:

Կայքը առայժմ ունի լուրերու, «կապ»երու, «Ազատ Օր»-ի ծանօթացման, ինչպէս նաեւ «Ազատ Օր»-ի հետ բնամակի կապ հաստատելու բաժիններ:

## ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

### «ՆԷԹ ՆԱՆՆԻ 4»

Եօթը տարի առաջ «Նէթ Նաննի» հրապարակեց Համացանցին վրայ պոռնոկազարկան կայքերու հասողութիւնը արգելող առաջին ծրագիրը՝ ծնողներու առիթ ընծայելով, որ հանգիստ մտքով համակարգիչը վստահին իրենց գաւակներուն: Այժմ, արդէն հրապարակի վրայ է ծրագրի չորս տարբերակը, որ կայքերու հասողութեան արգիւման եւ համակարգիչը օտագործողներու լրտեսումի շարք մը կարելիութիւններ կ'ընձեռէ զայն օգտագործողին:

Համակարգչային այս ծրագրի «ողնայար» կը հանդիսանայ պոռնոկազարկան եւ վարքաբնոյթի կայքերու եւ գոյցի սենեակներու ամբողջական ցանկը, ինչպէս նաեւ՝ դաստիարակչական կայքերու հարուստ հաւաքածոյ մը: Այսպիսով, ծրագիրը օգտագործողը կրնայ արգիլել վնասակար բոլոր կայքերու հասողութիւնը եւ միւս կողմէ՝ ճշդիւ յանձնարարելի կայքեր, զորս փոքրիկները կրնան այցելել:

Ծրագիրը օգտագործելը դիւրին է. կարելի է անոր մէջ արձանագրել միեւնոյն համակարգիչը օգտագործող մինչեւ 14 տարբեր անձերու համացանցի հասողութեան օրէնքներ: Անոնցմէ իւրաքանչիւրը, որ համակարգիչը կ'օգտագործէ, կ'արձանագրէ իր անունը եւ ծածկագիրը, եւ այսպիսով հասողութիւնը կ'ունենայ միայն իրեն համար ճշդուած կայքերուն: Այս դրութիւնը առիթ կու տայ մեծահասակներու, որ կարենան հասողութիւն ունենալ փոքրիկներու համար արգիլուած կայքերուն:

Ծրագիրը օգտագործողը նաեւ կարելիութիւն ունի տեսնելու, թէ իր փոքրիկը ո՞ր կայքերը այցելած է իր բացակայութեան ընթացքին: Այսպիսով, եթէ նոյնիսկ ան յաջողած է անբաղձալի կայքէ մը ներս «սպրդիլ», ծնողը տեղեկ կ'ըլլայ եւ կրնայ այդ կայքը եւս աւելցնել ծրագրին «արգիլելու» կայքերու ցանկին վրայ:

Աւելին, «անձնական տեղեկութիւններ» բաժինն միջոցով կարելի է արգիլել, որ ընտանիքի անդամներուն անունները, հասցէներ եւ հեռաձայնի թիւեր, ինչպէս նաեւ՝ «Քրետիք Քարտ»ի թիւեր օգտագործուին տուեալ համակարգիչը օգտագործողի մը կողմէ: Այսպիսով, կարելի է առաջը առնել «Քրետիք» քարտերու շահագործումին եւ համացանցին վրայ ընտանեկան տեղեկութիւններու բացայայտումին:

Համակարգչային այս ծրագիրը կ'արժէ շուրջ 80 տոլար գումար մը, որ շատ չէ՝ համակարգիչը փոքրիկներու հանգիստ մտքով վստահելու առիթը ունենալու իրրեւ փոխարժէք:




## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԱՐՈՒԷՍՏԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿԱՅՔԵՐ

Ծարձակակերի աշխարհին մէջ ամէն քայլափոխի տեղի ունեցած իրադարձութիւն կարծէք կը տեղեկագրուի Համացանցին վրայ: Ծիրմերու արժեւորումներ եւ մանրամասն տեղեկագրեր, դերասաններու ապագայի մասին եւ անձնական կեանքին մասին շուրջներ եւ ճշմարտութիւններ, եւ տակաւին շատ աւելին կարելի է գտնել Համացանցի շարք մը կայքերու վրայ, որոնք իրենց մասնագիտութիւնը դարձուցած են եօթներորդ արուեստի հեւքտ առօրեան շարժապատկերի պահանջարկի տիրահարկներուն մէջ ցուցադրուած ժապաւններու մասին արժեւորումներ:



www.rottentomatoes.com «Փտած լուրիկներ» անունով այս ծախող պաշտօնական մասին էջը որ կը խօսի: Այս կայքին մէջ կարելի է կարգաւ նշանաւոր թէ նուազ ծախք քննադատներու կողմէ գրուած գնահատականներ բազմաթիւ ժապաւններու: Կայքը կը գործանէ դասական թէ նոր ֆիլմերու սիւրահարներուն հետաքրքրութիւնը:



www.imdb.com Ինթընէթ «Համացանցի Մրամտութեամբ եւ հիւմըրով հարուստ այս կայքը կը պարունակէ ժապաւններու գնահատականներու հաւաքածոյ մը: Կայքը միայն նորագոյն ժապաւններու կայքը:

www.fast-rewind.com Ինթընէթ «Համացանցի Մրամտութեամբ եւ հիւմըրով հարուստ այս կայքը կը պարունակէ ժապաւններու գնահատականներու հաւաքածոյ մը: Կայքը միայն նորագոյն ժապաւններու կայքը:

www.hgtpt.com / / film.guardian.co.uk «Տը կարտիք» թերթին պաշտօնական կայքին շարժապատկերի յատկացուած այս բաժինը բոլոր տուեալները ունի գերազանց կայք մը նկատուելու: Տպաւորիչ վերլուծումներ, խորաթափանց արժեւորումներ, ուղադրու հարցազրոյցներ կայքը կը դարձնեն շարժապատկերի սիրահարներու իտէալական ժամադրավարը:

www.darkhorizons.com Իր ընդգրկած տեղեկութիւններուն ծաւալով եւ «մութ հորիզոններ» անունով այս կայքը կը գլխի կ'անցնի բոլորը: Ժապաւններու պատրաստութեան անալիզի իսկ այստեղ կարելի է գտնել գնահատականներ ժապաւններու բնագրութեան մասին: Եթե ներքին արուեստի անցեալի, ներկայի եւ ապագայի լուրերուն ծանօթանալու համար կարելի է այցելել նուազ գեղեցիկ ձեւաւորումով, բայց հարուստ պարունակութեամբ այս կայքը:

www.suntimes.com/index/ebert.html Ժապաւններու աշխարհահռչակ քննադատ Ռոնըր Էպըրթ այս կայքին մէջ կը ներկայացնէ իր արժեւորումները: Էպըրթի արժեւորումները մեծ ազդեցութիւն ունեցած են Հոլիվուտի ժապաւններու արտադրութեան ճարտարարուեստին վրայ: Ետնադասական այլ կայքեր են՝ www.aint-it-cool-news.com www.hollywood.com www.bfi.org.uk

## ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎՐԱՅ ԶՐՈՒՑԵԼՈՒ ՉՈՐՍ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ

Համացանցի վրայ գրոյցը հետաքրքրական ժամանակ մըն է, որ աշխարհի տարբեր կողմերէն մարդոց առիթ կ'ընծայէ ծանօթանալու իրարու եւ այսպիսով մէկէ մեկի մշակութիւններու, կենցաղներու եւ մտածելակերպներու հետ շփման մէջ մտնելու: Թէեւ Համացանցով գրուողներուն մեծ մասը նոր անձերու ծանօթանալու եւ հաճելի ժամանակ մը ունենալու համար կ'այցելեն «գրոյցի սենեակներ, սակայն կան ոմանք, որոնք իրենց գրուցակիցներուն կը մօտենան պարզապէս նեղութիւն պատճառելու եւ վնաս հասցրնելու համար:

Ստորեւ կը ներկայացնեն Համացանցով գրուողներու համար չորս յանձնարարութիւններ, որոնք ընթացիկ գրոյցները պիտի դարձնեն աւելի հաճելի եւ ապահով:



1. Անձնական տեղեկութիւններ չտալ «գրոյցի սենեակ»ներու մէջ, յատկապէս երբ ընդհանուրին հետ է գրոյցը եւ գրուցակիցները անծանօթներ են: Մտողներ պէտք է իրենց գաւակներուն յստակ դարձնեն, որ առանց իրենց արտօնութեան անձնական տեղեկութիւններ պէտք չէ տան իրենց գրուցակիցներուն:

2. Ընտանիքներ իրենց համակարգիչը նախընտրաբար պէտք է գետեղեն սենեակի մը մէջ, ուր կարելի է հսկողութեան տակ առնել իրենց փոքրիկները, այսպիսով անոնք վստահ կրնան ըլլալ, որ անոնք անձնական տեղեկութիւններ չեն տար անծանօթներու:

3. Չօգտագործել գրոյցի ծածկանուն մը («Երբեք») որ նման է ձեր բնամակի հասցէին, այսպէս մեծ թիւով անպէտք բնամակներ կ'ուղարկուին ձեր համակարգչին:

4. Չգրուցի տարօրինակ թուացող անձերու հետ, որոնք տեւաբար անձնական տեղեկութիւններ կը պահանջեն ձեզմէ: Զրոյցի ծրագրիներու մեծ մասը առիթ կ'ընծայէ նման անձեր «պլոք» ընելու:

## ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### «ՍԱՄՍՈՒՆԿ»-Ի ԹՈՒԱԳՐԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՔԱՄԵՐԱՆ

Ելեկտրոնային սարքերու արտադրութեան ճափոնական «Սամսոնիկ» ընկերութիւնը վերջերս հրապարակած է թուագրային լուսանկարչական մեքենայ մը, որ կը յատկանշուի իր նկարներուն հիանալի յատկութեամբ, գործածութեան դիւրութեամբ եւ... տոկոսներով: Սարքը օտուած է 3X «օփթիք» զուժով եւ 3,2 մէկափիքսէլ կարողութեամբ: Տպաւորիչ սարք մը, որ կ'արժէ աւելի քան 550 տոլար:



Պատրաստե՛ք խԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

**30 ԱՄԵՍԿԻ ԱՌԻԹՈՎ 30,000\$-Ի ԿՐԹԱԹՈՇԱԿ**

**ՓՕԼԻԿԼՕԹ**

Թեքնիքը ըզլէ՛ի կարիքաւոր եւ փայլուն սաներու

ԵԱԼՕԹ.- Նախապատուութիւնը պիտի տրուի կանուխ դիմողներուն

Արձանագրութիւն ամէն օր


**ՓՕԼԻԿԼՕԹ** ըզլէ՛, Տորա 01 - 251320

Տէր եւ պնդե՛ն ՊԵՏՐՈՍ ՇԵՄՍԵԱՆ

www.hamazkayin.com

www.lemagan.com

Սիրահարած եմ... մանրիկ մը հետ... որ ամուսնացած է»:



## ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ

-Սիրելիս կարծես համացանցին վրայ շատ ժամանակ կ'անցնես:

-Ո՛հ, տոթ քոմ, կը սխալիս, տոթ քոմ, սիրելիս, տոթ քոմ...

«Յարաբերութիւններու մասին խորհուրդ կը փնտռեմ համացանցին վրայ»:

# Մանկապատանեկան

## ՎԵՐԱՄՈՒՏ

Բազմաթիւ երկիրներու մէջ դպրոց յաճախելը ստիպողական է 6 - 16 տարեկաններուն համար: Այս օրէնքը գոյութիւն ունի ո՛չ քեզ նեղացնելու համար, այլ՝ օգնելու: Հաւանաբար դուք չես անդրադառնար, բայց սորվիրը անհրաժեշտ է, եթէ կ'ուզես դառնալ չափահաս մը, որ կարելիութիւնը ունի դատելու, տրամաբանելու եւ ապագային արհեստ մը ունենալու:



Դարձեալ վերամուտ է: Ուրախ ես, որովհետեւ

Առաւել... եթէ դպրոցը գոյութիւն չունենար, դուք բնաւ արձակուրդ պիտի չունենայիր:

## ՅԱՉՈՂ ԱՇԱԿԵՐՏ ԸԼԼԱՆՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Դպրոցական նոր տարեշրջան մը կը սկսի. դարձեալ ժամանակն է յաջող աշակերտ ըլլալու համար որոշումներ տալու եւ... գանձք յարգելու:



Հայելիին առջեւ կանգնած՝ աչքերուդ մէջ նայէ եւ բարձր ձայնով կրկնէ:

Նոստումներս կը յարգեմ:

Կարգով խմբիչներուն՝ վե՛րջ: Սեղանին վրայ միայն ջուր կը խմեմ:

Կանոնաւոր կերպով սննեակս կը կոկեմ:

«Կազմակերպուած» անձ մըն եմ:

Վերջին վայրկեանին չեմ սպասեր դասերս սորվելու համար:

«Այո»ի մը կամ «ոչ»ի մը համար կը դադրիմ գանգա՞նքէ:

Շարաթը անգամ մը մարզանք կ'ընեմ:

Ամիսը անգամ մը գիրք մը կը կարդամ (դպրոցին ճշդած ընթերցանութեան գիրքերէն գատ):

Չեմ ձգեր, որ այլեւս մէկը վրաս ազդէ կամ, ընդհակառակը, նուազ հրահանգող կ'ըլլամ:

Պնդանքներու սպառումը կը նուազեցնեմ:

Դասերու ընթացքին այլեւս չեմ շատախօսեր:

Այլեւս ուշ ժամանակ պատկերասփիւռ չեմ դիտեր:

Այլեւս ոչ մէկուն կը նախանձիմ:

Բիշ մը կը մասնակցիմ տան աշխատանքներուն:

Մէկ ժամ հեռաձայնով չեմ խօսիր ընկերոջս հետ (որուն հետն էի քիչ առաջ):

Կ'անդրադառնամ, որ տապալուած գետնախնձորներէն եւ խմորեղէններէն գատ գոյութիւն ունին ուրիշ բաներ, եւ ամէն ինչ կը համտեսեմ, նոյնիսկ...

մեծ մասիկս պատրաստած շոմիկով ճաշը:

Այլեւս բարեկամներս չեմ քննադատեր:

Կը դադրիմ ստելէ (նոյնիսկ եթէ աննշան պատիկ սուտ մըն է):

Ազնիւ կ'ըլլամ բոլոր դասընկերներու հետ:

Այլեւս ժամերով համացանցով չեմ գրադիր: Անոր խաղերը եւ գրոյցները («չէթիմկ») պէտք չէ խլեն դասերուս ժամանակը:

պիտի վերագտնես ընկերներդ, բայց նոյն ատեն քիչ մը մտահոգ ես՝ աւելի բարձր դասարան, նոր ուսուցիչներ, նոր դասեր... Ի՞նչ ընել:

Վերամուտէն օր մը առաջ ստուգէ, որ ժամացոյցդ լարած ես, որ պէսզի ան հնչէ պէտք եղած ժամուն: Լաւ նշան է վերամուտին առաջին օրը դպրոց հասնիլ կէս ժամ ուշացումով, մագերէ տակնուվրայ եւ աչքերդ ուռած:

Քննանալէդ առաջ պատրաստէ յաջորդ օրուան հագնելիք հագուստներդ: Ահաւոր է ամբողջ օրը անցընել՝ յուսալով, որ ոչ մէկը նշմարէ, թէ մէկ գուլպայդ կարմիր է, իսկ միւսը՝ կապոյտ, քանի որ ժամանակ չես ունեցած գտնելու իրարու համապատասխանող գոյգը:

Վերամուտի առտուն լաւ նախաճաշ մը ըրէ: Այս ձեռով դուք աւելի աշխուժ պիտի ըլլաս այդ օրը. առաւել, դասարանին լուսութեան մէջ պիտի չլսուի քու պարապ ստամոքսիդ ձայնը...

Ճամբայ ելլելէ առաջ ստուգէ պայուսակդ, եթէ չես ուզեր դպրոցական նոր տարիդ սկսիլ շուրջիներէդ մատիտ կամ թուղթ պահանջելով:

Մտածէ կունակիդ մասին: Պայուսակդ մի՛ ծանրարեռներ աւելորդ բաներով: Դուք մէկ տարի պիտի երթաս ու գաս զայն կունակիդ վրայ շալկած:

Բակ մի՛ մտնե՛ր կունակդ ծած, վախցած կատուի մը նման: Ինքնավստահ եղիր եւ բարձր պահէ գլուխդ:

Բարի՛ վերամուտ:

## ԻՆՉ ԿԱՅ ԳՐՉԱՏՈՒՓԻԴ ՄԷՋ

### ՄԵԼԱՆԸ ԻՆՉՊԵՍ ՇԻՆՈՒԱԾ Է

Մելանը կազմուած է 98 առ հարիւր ջուրով, որուն վրայ կ'աւելցնեն քիմիական ներկեր՝ կապոյտ, սեւ, կարմիր... Ըստ պահանջուած գոյնին: Որպէսզի ան շատ շուտ չչորնայ, անոր մէջ կ'աւելցնեն ջրոտ պահող նիւթ մը, որ կը նմանի աման լուալու հեղուկ օճառներուն: Կ'աւելցուին նաեւ նիւթեր, որոնք արգելք կ'ըլլան, որ մելանը մզլոտի: Վերջապէս, այս ամբողջ խառնուրդը կը գտնեն մանր ադտոտութիւնները հանելու համար: Իսկ գնդիկով գրիչներուն համար, ջուրին փոխարէն, կը դրուի մելանը թանձրացնող խէժ:



### ԳՈՒՆԱՒՈՐ ՄԱՏԻՏՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԿԸ ՇԻՆԵՆ

Երեւակայէ. ձեռքդ ունիս տախտակէ գաւազանիկ մը: Զայն երկայնքին մէջտեղէն երկուքի կը բաժնես եւ զանոնք կը փորես: Կտորներէն մէկուն մէջ կը դնես մատիտի ածուխը (չինուած՝ ածուխով, կաւով եւ ներկերով), եւ երկու բաժինները դարձեալ իրարու վրայ կը դնես: Կը փակցնես: Գաւազանիկդ պզտիկ կտորներու վերածէ եւ իւրաքանչիւր բաժինին մէջ ծայրը տաշէ: Պիտի ստանաս գունաւոր մատիտներու հաւաքածոյ մը:

### ԻՆՉՊԵՍ ԿԸ ՇԻՆԵՆ ՈՒՇԻՆԸ

Կակուղցուած ձգախէժին վրայ, վարդագոյն բաժինին համար կ'աւելցնեն կաւիճի փոշի, որ կը ջնջէ մատիտով գրուածները, իսկ ապակիի փոշի՝ մելանը ջնջող կապոյտ բաժինին համար: Խմորի այս մեծ երկիւղները կը տաքցնեն, ապա զանոնք կը կտրեն, երբ խմորը կը պաղի: Մնացեալ ռետիններու պարագային, ձգախէժը կը փոխարինեն կերպրնկալով:


### ԻՆՉՊԵՍ ԿԸ ՇԻՆԵՆ ՆԵՐԿԵՐԸ

Գունաւոր փոշի նիւթերով: Կարգ մը ներկեր կը շինուին գործարաններու մէջ, մինչ ուրիշներ բնական նիւթերէ կը պատրաստուին, ինչպէս՝ կապոյտը: Այս նիւթերուն վրայ կ'աւելցուի զանոնք իրարու խառնող նիւթ մը (արաբական ռետին կամ նշայ՝ կուաշին պարագային) եւ ուրիշ նիւթեր, որոնք արգելք կ'ըլլան, որ ներկը մզլոտի, եւ անոր սահուն կերպարանք մը կը տան:


### ՄԱՏԻՏԻՆ ՄԵՋԻ ԱՇՈՒՄԸ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԳՐԷ:

Շնորհիւ իր «Կապարէ գաւազանիկին»: Սակայն, բարեբախտաբար, այս անուանումը սխալ է, որովհետեւ այդ գաւազանիկին մէջ կապար չկայ: Ու՛՛՛՛՛, այդ նիւթը թունաւոր է: Մատիտին մէջի գաւազանիկը շինուած է կրաֆիթով (կաւի եւ ածուխի խառնուրդ մը), որ թուղթին վրայ հետքեր կը ձգէ: Որքան կաւին քանակը շատ ըլլայ, այնքան գիծը բաց գոյն կ'ունենայ: Գունաւոր մատիտներուն պարագային, կ'աւելցուի նիւթ մը՝ գոյնը:


## Ժ Ա Մ Ա Ն Ց




Զանգ՝ եռանկիւն կը տեսնես այս պատկերին մէջ:



Ո՞ր կտորը տան չի պատկանիր:



Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու ոչխարները:



Այս բուլդի կտորին վրայ գոյուրիւն ունին բոլոր բուլանշանները: Կրնա՞ս գտնուի գտնել:

bezdig\_mezdig@hotmail.com

ONE SECOND IS ENOUGH... Արգասը կը Պասաչի Երպասրոյանի Մը Մեջ...

...BUT WE USE THEM ALL. ...Իսկ Մեք Ներպաս Եւ Աւեք Երպասրոյան.

ԱՖՀԻԼ AFHIL

Աֆիտ-ի Հէք, Բ. Յարկ, Դեռ. Ե. Յարս. (01) 262231-242556-242557  
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

## ԿՈՒՉՈՒԻ

«Հաստատութիւն մը կարիքը ունի ցուցադրասրահին մէջ վաճառող օրիորդի մը՝ ուսման միջնակարգ մակարդակով, Պոլորձ Համուտի շրջանէն: Դիմել՝ հեռ. 01 - 258081:

## ՇԱՆՈՒ ԿԱՍ ՎԱՐՉՈՒ ԵՆ

«Բնակարաններ եւ խանութներ Պոլորձ Համուտի Արագածի շրջանին մէջ: Հեռ. 03-692872:

## ԿՈՒՉՈՒԻՆ

«Հաստատութիւն մը կարիքը ունի 20Ը 26 տարեկան երիտասարդ պաշտօնեաներու. պայման է երկրորդական վկայական եւ անգլերէն ու արաբերէն լեզուներու լաւ իմացութիւնը: Հեռ. 01-502329 (Սիւն էլ Ֆիլ):

## ԿՈՒՉՈՒԻՆ

«Ոսկերչատուն մը կարիքը ունի գիրքոն ջար գամող գործաւորներու: Հեռ. 01-890951:

## ԱՅԼԱԶԱՆ

«Հիւկ Ռիշար Հեծելանուրդը իսկական ախոյեան մըն է: Ան կըրցած է 19 վարկեան եւ 4 երկվարկեանէն հեծիկով մագլցիլ է խառնուրդակին երկրորդ յարկը հասցնող 747 աստիճանները:



«63 տարեկան ցափոնցի կիմ մը եղած է ամէնէն տարիքոտ կիմը, որ մագլցած է աշխարհի բարձրագոյն գագաթը Էվերէսթը: Ասիկա մեծ քաջագործութիւն մըն է, որովհետեւ գագաթը ունի 8,846 մեթր բարձրութիւն:



«Անգլիացիները մօտ ատենէն գունաւոր ստեպլիներու ծիածան մը պիտի ունենան իրենց պնակներուն մէջ: Մասնագէտներ կըրցած են մանիշակագոյն ստեպլիները աճեցնել: Անոնք ստացած են նաեւ սեւ եւ ճերմակ ստեպլիներ: Ուտելու ժամանակ անգլիացիները երկու անակնկալի առջեւ պիտի գտնուին. այս ստեպլիները ընդհանրապէս չաքարահամ են, իսկ անոնք մէջը... նարնջագոյն:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

**Հարսանեկան Քարտերում**  
Ուրի Հարսանեկան



Հարսանեկան 4երկրոն - Պ. Համուտ  
Հեռ. - 01-253008

**Կարոցական Դասագիրքեր**

\*Հայերեն \*Անգլերեն  
\*Արաբերեն \*Ֆրանսերեն  
\*Բառարաններ և զարգացումի գիրքեր

**Գրատուն ԱՍԿԵԴԱՐի մօտ**

Library VOSKETAR  
